Փրկիչի վերջին, միայնակ ճամփորդությունը

Չեյքլ Վորդլի
Եկեղեցու ամսագրեր

Իր մահկանացու կյանքի ընթացքում Փրկիչը շատ ճամփորդություններ կատարեց. մանուկ հասակում Նա դուրս եկավ Բեթլեհեմից և ճամփորդեց դեպի Եգիպտոս, Նա 40 օր ճամփորդեց անապատում, Նա բազում ճամփորդություններ կատարեց քաղաքներում, գյուղերում և տներում ուսուցանելով, բժշկելով և օրհնելով Իր ծառայության ընթացքում և այլն: Սակայն կա մի ճամփորդություն, որը Փրկիչը պետք է մենակ կատարեր, և դա մի ճամփորդություն էր, որը միայն Նա կարող էր տանել:

ECCE HOMO, ԼՈՒԻՍ ՈՐՅԵՐ, ՈՒԻԼՅԱՄՍԹԱՈՒՆ, ՄԱՍԱՉՈՒՍԵՏՍ

«Զատիկի կիրակի օրը մենք տոնում ենք աշխարհի պատմության ամենաերկար սպասված փառահեղ իրադարձություններից մեկը:

Դա այն օրն է, որը փոխեց ամեն ինչ:

Այդ օրը փոխեց իմ կյանքը:

Փոխեց ձեր կյանքը:

Աստծո բոլոր զավակների ճակատագիրը փոխվեց»:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ, Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական, «Շնորհի պարգևը», *Լիահոնա,* մայիս 2015, 107:

Օ. ՍԻՄՈՆ ԴԵՎԻ, ՍԱՐԱՀԱՐԿ

Անհամեմատելի տառապանք

«Ոչ մի մահկանացու լիովին չի կարող ըմբռնել այն, ինչ Քրիստոսն արեց մեզ համար Գեթսեմանիում:

Մենք գիտենք, որ նրա յուրաքանչյուր ծակոտիից արյուն էր հոսում, երբ նա խմում էր այդ դառը բաժակից, որը նրան տվել էր իր Հայրը:

Մենք գիտենք, որ նա տառապեց թե՛ մարմնով, թե՛ հոգով, ավելի, քան հնարավոր է կենդանի մարդու համար:

Մենք գիտենք, որ ինչ-որ կերպ, մեզ համար անըմբռնելի ձևով նրա տառապանքը բավարարեց արդարադատության պահանջները, ազատեց մեղավոր հոգիներին ցավից ու մեղքի պատժից, և ողորմածությունը ուժի մեջ մտավ նրանց համար, ովքեր հավատում են նրա սուրբ անվանը:

Մենք գիտենք, որ նա ուժասպառ ընկած էր գետնին, երբ ցավի և տանջանքների անսահման ծանրության տակ դողում էր և չէր ցանկանում խմել այդ դառը բաժակը»:

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկի՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, «Աշակերտության գինը և օրհնությունները», *Ensign,* մայիս 1985, 9:

Անձնական փորձառություն. Թերևս միշտ չէ, որ մենք գիտակցում ենք, սակայն Քավության ընթացքում Փրկիչը տարավ ամեն տեսակ ցավ: Նա հասկանում է յուրաքանչյուր ֆիզիկական ցավ՝ սկսած կոտրված ոսկորից մինչև ամենածանր քրոնիկ հիվանդությունը: Նա զգացել է հոգեկան տկարության խավարն ու հուսահատությունը, ինչպիսիք են՝ ընկճախտը, անհանգստությունը, կախվածությունը, լքվածությունը և վիշտը: Եվ Նա զգացել է հոգու յուրաքանչյուր ցավ, քանի որ Նա Իր վրա վերցրեց ողջ մարդկության մեղքերը:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է. «Տկարության պահին հնարավոր է մենք աղաղակենք. «Ոչ ոք չգիտի, թե ինչի միջով եմ ես անցնում: Ոչ ոք չի հասկանում»: Սակայն Աստծո Որդին կատարելապես գիտի և հասկանում է, քանի որ Անձամբ զգացել և կրել է մեր անհատական բեռները» («Իրենց բեռները հեշտությամբ տանեին», *Լիահոնա,* մայիս 2014, 90):